

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)			[2] Սերիա		[3] Համար	
7	Հոկտեմբեր	2019 թ.				Բ		0114741127	
[4] Մատուցման ամսաթիվը						Ճշգրտվող հաշիվ վավերագրի			
7	Հոկտեմբեր	2019 թ.				Սերիա		Համար	
						Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ			
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ			[6] Համար			
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)									
[7.1] ՀՂՄ կտրոնի համար									

<b>Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի</b>												
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)					0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը												
[10] Անվանումը		«ՎԻ ԳՐՈՒՊ» Մասնաձեռնական ընկերություն (ՍՊԸ)										
[11] Բանկային տվյալները		Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570015111280200								
[12] Գտնվելու վայրը (հասցեն)		Յրդ միկ. շրջ. 23 18										
[13] Լրացուցիչ տվյալներ												

<b>Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի</b>												
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)					0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը												
[16] Անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ										
[17] Բանկային տվյալները		ՀՀ Ֆին. նախ. աշխ. գործառն. վարչ.		N 900011000834								
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5										
[19] Լրացուցիչ տվյալներ												
[20] Ում միջոցով		Անուն, ազգանուն										
		Լիազորագիր		Համար								
				Ամսաթիվ								

<b>[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը</b>						
NN C/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորներ	Շահույթի կամ ծախսերի միջին արժեքը	Միավորի գինը	Ձեռք (%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Ֆրանսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	475.59	4475		2128265.25
2	Հոլանդերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	6.51	12000		78120
3	Վրացերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	15.43	2975		45904.25
4	Գերմաներեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	2.24	4475		10024
5	Վրացերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	59.89	2975		178172.75
6	Բելառուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	2.74	7150		19591
7	Հայերեն-ֆրանսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	16.23	4475		72629.25
8	Վրացերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	29.69	2975		88327.75
9	Ուկրաիներեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	76.91	4550		349940.5
10	Պարսկերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	5.66	3475		19668.5
<b>Ընդամենը</b>						<b>2990643.25</b>

Ծառայություն  
մատուցող  
(աշխատանք  
կատարող)

STEPANYAN HMAYAK 2301850293

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Ծառայություն  
(աշխատանք)  
ստացող

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Պայմանագրի կողմ

ՎԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ  
ք.Աբովյան 3 միկ.23/18  
Ամերիաբանկ ՓԲԸ  
Հ/Հ 1570015111280200  
ՀՎՀՀ 03538112

Պատվիրատու

ՀՀ քննչական կոմիտե  
ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց 46/5  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,  
Հ/Հ 900011000834  
ՀՎՀՀ 02631263

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11  
ՀԱՆՁՆԱՆ-ԸՆԴՈՒՄԱՆ

«07» հոկտեմբերի 2019թ.

Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «\_\_\_» «\_\_\_\_\_» 2019թ.

Պայմանագրի համարը՝ «\_\_\_\_\_»

Պատվիրատուն՝ ի դեմս ՀՀ քննչական կոմիտեի ղեկարտամենտների ղեկավար Ա.Նիկոյանի և Պայմանագրի կողմը ի դեմս ՎԻ Գրուպ ՍՊԸ-ի տնօրեն Հ.Ատեփանյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «07» հոկտեմբերի 2019թ դուրս գրված N Ք0114741127 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի		
1	Թարգմանչական ծառայություն	Թիվ 10112017 քրեական գործով – գրավոր միջին բարդության թարգմանություն <u>ֆրանսերենից հայերեն</u>	471 էջ	475.59 էջ	IV եռամսյակ		2128265.25	
2	Թարգմանչական ծառայություն	Թիվ 10112017 քրեական գործով – գրավոր միջին բարդության թարգմանություն <u>իտալերենից հայերեն</u>	10 էջ	6.51 էջ	IV եռամսյակ		78120	
3	Թարգմանչական ծառայություն	Թիվ 13895317 քրեական գործով – գրավոր միջին բարդության թարգմանություն <u>վրացերենից հայերեն</u>	16 էջ	15.43 էջ	IV եռամսյակ		45904.25	
4	Թարգմանչական ծառայություն	Թիվ 18102214 քրեական գործով – գրավոր միջին բարդության թարգմանություն <u>գերմաներենից հայերեն</u>	7 էջ	2.24 էջ	IV եռամսյակ		10024	
5	Թարգմանչական ծառայություն	Թիվ 13816816/1 քրեական գործով – գրավոր միջին բարդության թարգմանություն <u>վրացերենից հայերեն</u>	63 էջ	59.89 էջ	IV եռամսյակ		178172.75	
6	Թարգմանչական ծառայություն	Թիվ 58218017 քրեական գործով – գրավոր միջին բարդության թարգմանություն <u>բելառուսերենից հայերեն</u>	2 էջ	2.74 էջ	IV եռամսյակ		19591	
7	Թարգմանչական ծառայություն	Թիվ 15861918 քրեական գործով – գրավոր միջին բարդության թարգմանություն <u>հայերենից ֆրանսերեն</u>	11 էջ	16.23 էջ	IV եռամսյակ		72629.25	
8	Թարգմանչական ծառայություն	Թիվ 90202917 քրեական գործով – գրավոր միջին բարդության թարգմանություն <u>վրացերենից հայերեն</u>	21 էջ	29.69 էջ	IV եռամսյակ		88327.75	

9	Թարգմանչական ծառայություն	Թիվ 11152018 քրեական գործով -- գրավոր միջին բարդության ուկրաիներենից հայերեն	73 էջ	76.91 էջ	IV եռամսյակ	349940.5	
10	Թարգմանչական ծառայություն	Թիվ 70900915 քրեական գործով -- գրավոր միջին բարդության պարզմանություն պարսկերենից հայերեն	17 էջ	5.66 էջ	IV եռամսյակ	19668.5	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:



**ՎԿՏ N**

**Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Քննչական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) **և**  
(Պատվիրատուի անունը)

Վի Գրուպ ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 201 թ. ----- -ին կնքված N -----  
(Կատարողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2019թ. հոկտեմբերի 7-ին հանձնման-ընդունման նպատակով  
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը
գրավոր միջին բարդության թարգմանություն ֆրանսերենից հայերեն	475.59	էջ
գրավոր միջին բարդության թարգմանություն հոլանդերենից հայերեն	6.51	էջ
գրավոր միջին բարդության թարգմանություն վրացերենից հայերեն	15.43	էջ
գրավոր միջին բարդության թարգմանություն գերմաներենից հայերեն	2.24	էջ
գրավոր միջին բարդության թարգմանություն վրացերենից հայերեն	59.89	էջ
գրավոր միջին բարդության թարգմանություն բելառուսերենից հայերեն	2.74	էջ
գրավոր միջին բարդության թարգմանություն հայերենից ֆրանսերեն	16.23	էջ
գրավոր միջին բարդության թարգմանություն վրացերենից հայերեն	29.69	էջ
գրավոր միջին բարդության թարգմանություն ուկրաիներենից հայերեն	76.91	էջ
գրավոր միջին բարդության թարգմանություն պարսկերենից հայերեն	5.66	էջ

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**


  
 Հանձնեց  
 Հ.Ստեփանյան  
 ազգանուն, անուն  
 ստորագրություն


  
 Ընդունեց  
 Արթուրյան Ջեյ  
 ազգանուն, անուն  
 ստորագրություն

## ՈՐՈՇՈՒՄ

### քրեական գործով թարգման ներգրավելու մասին

09.08.2018թ

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ՝ Ռ. Գ. Սարգսյանս, քննարկելով Սմբատ Զաքարյանի վերաբերյալ Բելգիայի Թագավորության իրավասու մարմինների կողմից հարուցված քրեական գործի նյութերը

### Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչությունից Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին ստացվել է Բելգիայի Թագավորությունից ուղարկված Հայաստանի Հանրապետության քաղաքացի Սմբատ Զաքարյանի /ծնված 09.08.1984թ/ կողմից 2015 թվականի հունիսի 27-ին Բրյուսել քաղաքում հրազենի գործադրմամբ Գրիգոր Հովհաննիսյանին սպանելու փաստի վերաբերյալ հարուցված քրեական գործի նյութերը և Բրյուսելի գլխավոր դատախազի տեղակալ Էստել Արփինյիի 2017 թվականի ապրիլի 4-ի խնդրանքը՝ «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի Եվրոպական կոնվենցիայի հիման վրա Սմբատ Զաքարյանին Հայաստանի Հանրապետությունում դատապարտելու մասին:

2017 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ ՔԿ Երևան քաղաքի վարչությունից Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին ստացված քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է հինձ:

Նախաքննության ընթացքում Բելգիայի Թագավորությունից ստացված և ՀՀ ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 10112017 քրեական գործով վարույթը ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտ՝ հայերեն լեզվով թարգմանելու նպատակով:

ՀՀ ՔԿ դեպարտամենտից ստացվել է գրություն, համաձայն որի՝ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 10112017 քրեական գործի ֆրանսերեն լեզվով փաստաթղթերի թարգմանությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է թարգմանիչ ներգրավվելու մասին որոշում: Թարգմանությունը կատարելու է «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Ալինա Խաչատրյանը:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

### Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 10112017 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգման Ալինա Խաչատրյանին, ով լիազորված է ՀՀ քննչական կոմիտեում լիազորագրի շրջանակներում կատարել բանավոր և գրավոր թարգմանություններ ֆրանսերեն լեզվից հայերեն և հակառակը:

2. Ալինա Խաչատրյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները,


նան նախագգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝



Ռ. Գ. Սարգսյան

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններին, նախագգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:



« \_\_\_\_\_ » 201 թ.

09.08.2018թ

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ՝ Ռ. Գ. Սարգսյանս, քննարկելով Սմբատ Զաքարյանի վերաբերյալ Բելգիայի Թագավորության իրավասու մարմինների կողմից հարուցված քրեական գործի նյութերը

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

2017 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչությունից Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ստացվել է Բելգիայի Թագավորությունից ուղարկված Հայաստանի Հանրապետության քաղաքացի Սմբատ Զաքարյանի /ծնված 09.08.1984թ/ կողմից 2015 թվականի հունիսի 27-ին Բրյուսել քաղաքում հրազենի գործադրմամբ Գրիգոր Հովհաննիսյանին սպանելու փաստի վերաբերյալ հարուցված քրեական գործի նյութերը և Բրյուսելի գլխավոր դատախազի տեղակալ Էստել Արփինյիի 2017 թվականի ապրիլի 4-ի խնդրանքը՝ «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» 1959 թվականի ապրիլի 20-ի Եվրոպական կոնվենցիայի հիման վրա Սմբատ Զաքարյանին Հայաստանի Հանրապետությունում դատապարտելու մասին:

2017 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ ՔԿ Երևան քաղաքի վարչությունից Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ստացված քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է հնձ:

Նախաքննության ընթացքում Բելգիայի Թագավորությունից ստացված և ՀՀ ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 10112017 քրեական գործով վարույթը ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտ՝ հայերեն լեզվով թարգմանելու նպատակով:

ՀՀ ՔԿ դեպարտամենտից ստացվել է գրություն, համաձայն որի՝ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 10112017 քրեական գործի ֆրանսերեն լեզվով փաստաթղթերի թարգմանությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է թարգմանիչ ներգրավվելու մասին որոշում: Թարգմանությունը կատարելու է «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Ալինա Խաչատրյանը:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Վարույթիս թիվ 10112017 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգման Ալինա Խաչատրյանին, ով լիազորված է ՀՀ քննչական կոմիտեում լիազորագրի շրջանակներում կատարել բանավոր և գրավոր թարգմանություններ ֆրանսերեն լեզվից հայերեն և հակառակը:

2. Ալինա Խաչատրյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները,

ԵՄՆ ԵՄԽԱԳԳՈՒԶԱԳՆԵՆԵՆԻ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝



Ռ. Գ. Սարգսյան

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:



« \_\_\_\_\_ » 201 թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ԹԱՐԳՄԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

01.10.2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի հատկապես կարևոր գործերով քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Ա. Լ. Հարությունյան, վերանայելով վարույթում քննվող թիվ 13895317 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

2017թ.-ի սեպտեմբերի 29-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի Մարաշի բաժանմունքի պետի տեղակալ Մ. Ունրշատյանը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 15:15-ի սահմաններում Երևան քաղաքի Ալեք Մանուկյան 1 հասցեում գտնվող ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետի մուտքի դիմաց Ծառուկ Տիգրանի Ծառուկյանը, Վահագն Գրիգորի Էյրազյանը, Հովհաննես Սերյոժայի Պալյանը և դեռևս ինքնությունները չպարզված այլ անձինք բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելով հասարակության նկատմամբ և կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, ձեռքերով, ոտքերով և մահակներով հարվածներ են հասցրել Լյովա Գնեյի Խաչատրյանի մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ 30.09.2017թ.-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով հարուցվել է թիվ 13895317 քրեական գործը:

02.10.2017թ.-ին թիվ 13895317 քրեական գործն ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի՝ նախաքննություն կատարելու համար:

03.10.2017թ.-ին թիվ 13895317 քրեական գործը ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում վրաստանի Հանրապետության իրավասու մարմիններից իրավական օգնություն ստանալու վերաբերյալ հարցում է ուղարկվել և 14.09.2018թ.-ին ստացվել են հարցման արդյունքները՝ վրացերեն լեզվով:


Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել վրացերեն լեզվով կատարել փաստաթղթերի թարգմանություն և «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանչուհի Նելլի Գեորգիի Թոռչյանն ազատորեն տիրապետում է գրավոր, բանավոր հայերենին ու վրացերենին, ունի թարգմանչի որակավորում,

ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Վարույթումն քննվող թիվ 13895317 քրեական գործով թարգման ճանաչել վրացերեն լեզվի մասնագետ՝ «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանչուհի Նելլի Գեորգիի Թոոյանին (ծնված՝ 17.07.1956թ.-ին, հասցե՝ ք. Երևան, Հակոբ Հակոբյան փող. 42. 43բն., վկայական՝ թիվ 40):
2. Նելլի Գեորգիի Թոոյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**ՀԿԳ ՔՆՆԻՉ՝**



**Ա. Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Որոշմանը ծանոթացա, օրինակը ստացա: Ինձ պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**Թարգման՝**





Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

01 հոկտեմբերի, 2018թ

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Հ.Ս.Հարությունյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 13816816/1 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2016թ. սեպտեմբեր ամսին, անհայտ անձը, Արտաշես Գևորգի Նեմիշայանի անձնական կյանքին վերաբերող՝ ինքնությունը չպարզված կնոջ հետ սեքսուալ բնույթի հարաբերություններ ունենալու ընթացքում կատարված տեսաձայնագրությունը որպես արատավորող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքով վերջինիցս պահանջել է առանձնապես խոշոր չափերի՝ 500.000 ԱՄՆ դոլարին համարժեք 237.390.000 ՀՀ դրամ գումար:

Դեպքի առթիվ 2016թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 182 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 13816816 քրեական գործը:

27.03.2017 թվականին թիվ 13816816 քրեական գործից Աննա Աշոտի Նոխուրյանի կողմից Աշոտ Գագիկի Միքայելյանի և քննությամբ չպարզված անձանց հետ նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափի գույքի շորթում կատարելուն օժանդակելու և անհայտ անձանց կողմից Աշոտ Գագիկի Միքայելյանի և Աննա Աշոտի Նոխուրյանի հետ նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափի գույքի շորթում կատարելու վերաբերյալ մասերն անջատվել, կազմվել է առանձին վարույթ և շնորհվել է թիվ 13816816/1 համարը:

Նախաքննության ընթացքում Վրաստանի Հանրապետության իրավասու մարմիններից ստացվել են իրավական օգնություն ցույց տալու մասին հարցմամբ պահանջվող փաստաթղթերը:


Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել վրացերեն լեզվից հայերեն թարգմանել վերոնշյալ փաստաթղթերը, որպիսի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել "Վի գրուպ" ՍՊԸ-ի թարգմանչուհի Նելլի Գեորգիի Թոռչյանին նշված փաստաթուղթը թարգմանելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻՒ

1. Թիվ 13816816/1 քրեական գործով որպես թարգման ճանաչել "Վի գրուպ" ՍՊԸ-ի թարգմանչուհի Նելլի Գեորգիի Թոոյանին /ծնված՝ 17.07.1956թ., հասցե՝ ք.Երևան, Հակոբ Հակոբյան փող., 42., բն 43, վկայական 40/ :
2. Թարգմանչուհի Նելլի Գեորգիի Թոոյանին պարզարանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝



Հ.Ս.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Խաչատրյան*

*Լ*

«19» հոկտեմբերի 2018թ.

ք.Երևան

«Վ» քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիբեռնահանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Թ.Նալբանդյան, վերանայելով վարույթումս քննվող թիվ 58218017 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

«Վ» քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիբեռնահանցագործությունների քննության վարչությունում քննվում է թիվ 58218017 քրեական գործը, որի նախաքննությամբ անհրաժեշտություն է առաջացել կատարել գրավոր թարգմանություն՝ բելառուսերեն լեզվից հայերեն:

Նկատի ունենալով, որ «Վի Գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Վալերիա Ժդանովիչն ազատորեն տիրապետում է հայերեն և բելառուսերեն լեզուներին, չի հանդիսանում քրեական գործով շահագրգռված անձ և կարող է հրավիրվել որպես թարգմանիչ, ուստի՝ ելնելով վերոգրյալից ղեկավարվելով «Վ» քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

Թիվ 58218017 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Վալերիա Ժդանովիչին /ծնված՝ 10.03.1965թ., Բելառուսի Հանրապետության քաղաքացի, անձնագիր՝ MP2689872/ և նրան պարզաբանել «Վ» քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել «Վ» քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ՝



Թ.Նալբանդյան

Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել են «Վ» քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել եմ «Վ» քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Վ.Ժդանովիչ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

թարգման ճանաչելու մասին

<<23>> 11. 2018թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական՝ Գ.Ռ.Բաղդասարյան, վերանայելով վարույթում գտնվող թիվ 15861918 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

2018թ. սեպտեմբերի 14-ին ժամը՝ 15:00-ին Նեղա Համազասպի Շահինյան-Մանուկյանը «Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 13:15-ի սահմաններում Երևան քաղաքի Քաջազունի փողոցի 6-րդ շենքի 6-րդ մուտքում անհայտ անձը իր պարանոցից քաշել պոկելու միջոցով բացահայտ հափշտակել է ոսկյա շղթա՝ պատճառելով 250.000 «դրամի գույքայինն վնաս:

Դեպքի առթիվ «Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում «Քրեական օրենսգրքի 176 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 15861918 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու նպատակով ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի:

01.11.2018թ. թիվ 15861918 քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում քննչական պահանջ է ուղարկվել Ֆրանսիայի Հանրապետություն տուժող Նեղա Շահինյանին հարցաքննելու նպատակով, որի համար անհրաժեշտ է քննչական պահանջը և կից փաստաթղթերը թարգմանել հայերենից ֆրանսերեն, որպիսի պայմաններում անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ, ով ազատորեն տիրապետում է ֆրանսերեն և հայերեն գրավոր լեզուներին, իսկ որպես այդպիսին հանդես է գալիս «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Ալինա Խաչատրյանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83 հոդվածների պահանջներով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Վարույթում գտնվող թիվ 15861918 քրեական գործով թարգմանիչ ճանաչել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից Ալինա Խաչատրյանին:

2. Ալինա Խաչատրյանին պարզաբանել «Քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել «Քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Գ. Ռ. Բաղդասարյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ա.Խաչատրյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Թարգմանիչ ներգրավելու մասին

<<26>> նոյեմբերի 2018թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի ՁԲԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Կ.Կ.Ալեքսանյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 90202917 քրեական գործի նյութերը.

**Պ Ա Ր Ձ Ե Ց Ի**

«ՊՆ 95532 զորամասի պայմանագրային զինծառայող, 3-րդ հրաձգային գումարտակի, 2-րդ հրաձգային վաշտի, 1-ին հրաձգային դասակի, 3-րդ հրաձգային ջրկի ավագ հրաձիգ, սերժանտ Նարեկ Վաչագանի Մելիքսեթյանը, 16.01.2017թ. ժամը 09:00-ից առ այսօր առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չի ներկայացել՝ ծառայությունից բացակայելով 3 օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ:

Դեպքի առթիվ Երևանի կայազորի զինվորական դատախազությունում 24.01.2017թ. հարուցվել է թիվ 90200317 քրեական գործը «Քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, որը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է «ՔԿ ՁԲԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի»:

26.01.2017 թվականին թիվ 90200317 քրեական գործն ընդունվել է «ՔԿ ՁԲԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի վարույթ»:

Ն.Մելիքսեթյանին հայտնաբերելու և վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ հետախուզական միջոցառումները արդյունք չեն տվել:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է թարգմանել Վրաստանի իրավասու մարմիններից ստացված իրավական հարցման պատասխանը, որը գրված է վրացերեն լեզվով, ուստի անհրաժեշտ է ներգրավել վրացերեն լեզվին տիրապետող թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. Վարույթումս քննվող թիվ 90202917 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել 17.07.1956թ. ծնված վրացերեն լեզվի մասնագետ Նելլի Գեորգիի Թոռյանին, որին պարզաբանել «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը և նախազգուշացնել «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին»:

Քննիչ

Կ.Ալեքսանյան

Սույն որոշումն ինձ հայտնվել է << >> \_\_\_\_\_ թ.-ին:

Ն.Թոռյան՝

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

Քրեական գործով թարգման ներգրավելու մասին

30.11.2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական՝ Ն.Վարդանյանս, քննարկելով վարույթում գտնվող թիվ 11152018 քրեական գործի կյութերը,

**Պ Ա Ր Չ Ե Ց Ի՝**

2018 թվականի հունվարի 12-ին, ոստիկանության Շենգավիթ բաժնի գրություն է ներկայացրել <<ԱՌԳԵ ԲԻՉՆԵՍ>> ՍՊԸ-ի տնօրեն Չուրաք Ջուլջուանն այն մասին, որ Երևան քաղաքի Շարուրի փողոցի 47/1 հասցեում գործող իր ՍՊԸ-ն 2017 թվականի դեկտեմբեր ամսվա սկզբին Չեխիայի հանրապետությունում գործող <<Պրոկտոր ընդ Գեմբլ Ինթերնեյշնլ Օպերեյշնս>> ընկերությունից, թիվ 1062532765 հաշիվ ապրանքագրով գնել է 64144.46 ԱՄՆ դոլլարին համարժեք 31.033.687 դրամ արժողության հիգիենայի պարագաներ, խնամքի միջոցներ և այլ տեսակի ապրանքներ, որոնք ՀՀ տեղափոխելու համար ՍՊԸ-ն առաքման պատվեր է տվել ուկրաինական <<Դոնայ-Տրանզիտ >> ՍՊԸ-ին, իսկ վերջինս էլ փոխադրումը կազմակերպելու համար ներգրավել է P.E NEHIVYY R.P ընկերությանը, որի վարորդ ներկայացած Ուկրաինայի Հանրապետության քաղաքացի Վլադիմիր Պետրունկոն 18.12.2017թ. Չեխիայի Հանրապետությունում ընդունել է վերը նշված ապրանքները՝ ստորագրելով թիվ 1263444 CRM բեռնագիրը, սակայն չի կատարել բեռնափոխադրումը, բեռնված ապրանքներով և փոխադրում իրականացնող BO7876BC-BC0066XP բեռնատար ավտոմեքենան անհետացել է՝ յուրացնելով իրեն վստահված գույքը :

Դեպքի առթիվ 2018 թվականի հունվարի 17-ին՝ ՀՀ ոստիկանության Շենգավիթ բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 11152018 քրեական գործը և ուղարկվել նախաքննության:

Թիվ 11152018 քրեական գործով կատարվել է նախաքննություն և 2018 թվականի մարտի 15-ին որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին :

2018 թվականի նոյեմբերի 8-ին որոշում է կայացվել թիվ 11152018 քրեական գործը վարույթ ընդունելու մասին :

Նախաքննությամբ անհրաժեշտություն է առաջացել թարգմանելու Ուկրաինայի իրավասու մարմնին ուղարկված իրավական օգնություն ցույց տալու մասին հարցմամբ ստացված կյութերը, Ուկրաինայի գլխավոր դատախազության 26.09.2018թ. թիվ 14/1/1-24676-18 և ՀՀ գլխավոր դատախազության 02.11.2018թ. թիվ 21/21/12270-18 ուղեկցական գրությունների պատճենները, որոնք կազմված են ուկրաիներեն և ռուսերեն լեզուներով, հայերեն լեզվով :

Սկստի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել թարգմանիչ ստացված փաստաթղթերը հայերեն լեզվով թարգմանելու համար: Պարզվել է, որ սվյալ փաստաթղթերի թարգմանությունը, պետք է իրականացնի Լուսինե Ռազմիկի Մարգարյանը:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 11152018 քրեական գործով որպես թարգման ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի ուկրաիներենի լիազոր թարգման Լուսինե Ռազմիկի Մարգարյանին, որն ունի ուկրաիներեն լեզվից թարգմանչի համապատասխան որակավորում:

2. Լուսինե Ռազմիկի Մարգարյանին պարզաբանել ՀՀ ԶԴՕ 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Ն. Վարդանյան

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:



«30» \_\_\_\_\_ 2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
թարգմանիչ ճանաչելու մասին

ք. Երևան

« 09 » հունիսի 2015թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՀԿԳ քննիչ՝  
Հ.Ա.Խաչատրյան, վերանայելով վարույթում քննվող թիվ 70900915 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչությունում 24.04.2015թ-ին ՀՀ քրեական օրենսգրքի 259-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված թիվ 70900915 քրեական գործի նախաքննությամբ պարզվել է՝

24.04.2015թ-ին ժամը՝ 11:05-ի սահմաններում անհայտ անձը 098-49-43-07 հեռախոսահամարից զանգահարել է ՀՀ ոստիկանության Դավիթաշենի բաժանմունքի՝ 010-36-02-02 հեռախոսահամարին և տվել ահաբեկչության վերաբերյալ սուտ հաղորդում այն մասին, որ «Ձվարթնոց» օդանավակայանի տարածքում ռումբ է տեղադրված:

Նախաքննության ընթացքում ՀՀ ազգային անվտանգության ծառայությունից ստացված օպերատիվ գրության համաձայն՝ 098-49-43-07 հեռախոսահամարը պատկանում է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Աբդուռասուլի Ֆարվարդիին, որը ահազանգի օրը օգտագործվել է 35862204412949 գործարանային համարով բջջային հեռախոսով:

Միաժամանակ պարզվել է, որ նշված գործարանային համարի բջջային հեռախոսի մեջ տեղադրված է եղել Վրաստանի Հանրապետության քաղաքացի Թամազ Լեկիաշվիլիի անվամբ գրանցված «Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերության 093-65-34-01 հեռախոսահամարը:

Բացի այդ, նույն գործարանային համարով բջջային հեռախոսի մեջ 17.04.2015թ-ին տեղադրված է եղել Վրաստանի Հանրապետությունում գործող օպերատորի +995597550614 հեռախոսահամարը, որի բաժանորդի և փաստացի օգտագործող անձի ինքնությունը քննությամբ դեռևս չի պարզվել:

20.05.2015թ-ին Թամազ Լեկիաշվիլին ձերբակալվել է ՀՀ քրեական օրենսգրքի 259-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարելու կասկածանքով:

23.05.2015թ-ին Թամազ Լեկիաշվիլիին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-259-րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարք կատարելու համար և վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Քրեական գործով մի շարք հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտ դատավարական գործողություններ կատարելու համար քննչական պահանջներ են կազմվել Վրաստան և Իրանի Իսլամական Հանրապետություն ուղարկելու համար:

Նկատի ունենալով, որ Իրանի Իսլամական Հանրապետություն ուղարկվող քննչական պահանջը անհրաժեշտ է թարգմանել պարսկերեն լեզվով, այդ իսկ պատճառով պետք է քրեական գործով որպես թարգմանիչ ճանաչել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի աշխատակից Հրանուշ Մկրտիչի Թոխմասյանին, ով տիրապետում է ինչպես հայերեն, այնպես էլ պարսկերեն լեզուներին գրավոր և բանավոր կերպով և կարող է կատարել թարգմանություններ նշված լեզուներով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 70900915 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Մկրտիչի Թոխմասյանին /ծնվ. 15.01.1964թ., անձնագիր՝ AN 0780981/ -----:

ՀԿԳ քննիչ  Հ. Խաչատրյան

Ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացվել են ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ  Հ.Թոխմասյան

Որոշումը հայտնեց իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց և պատասխանատվության մասին նախազգուշացրեց

ՀԿԳ քննիչ  Հ. Խաչատրյան